



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, 0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19, հեռ.՝ (+374 11) 51 33 50, էլ. փոստ՝ artak.manukyan@parliament.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքների նախագծերը,
2. օրենքներն քննարկելու հիմնավորումը,
3. գործող օրենքների փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքները:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՏԱԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱՐԿԵՆ

ԹՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-124-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասում «առնվազն երեսնօրյա պարբերականությամբ» բառերը փոխարինել «իր կողմից կամ ավանդային պայմանագրում նշված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը» բառերով.
- 2) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ավանդատուին տրամադրվում են գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է հաշվի քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ հաշվի քաղվածքները փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Ավանդատուն իրավունք ունի նաև սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ստանալ բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել ավանդատուին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի հաշվի քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցներով ստանալու իր իրավունքից:».

- 3) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասում «փոստային» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով.
- 2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Ավանդատուն իրավունք ունի նաև սույն հոդվածի առաջին մասով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ստանալ բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել ավանդատուին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:».

- 3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.
- 4) լրացնել նոր բովանդակությամբ 5.1-ին մաս.

«5.1. Սույն հոդվածով և 6-րդ հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում բանկն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր ավանդատուների կամ ավանդատուների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ

պայմանավորված փոփոխությունների մասին ավանդատուի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով և ժամկետներում:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բանկի ծառայություններից օգտվող ավանդատուի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ավանդատուին 30 օրվա ընթացքում վճարել երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) բանկը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և

2) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:»:

Հոդված 4. Օրենքի ուժի մեջ մտնելը և անցումային դրույթները

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի:

2. Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում սույն օրենքի ուժի մեջ մտնելու դրությամբ գործող այն իրավահարաբերությունների վրա, որոնց հետ կապված ավանդատուների կողմից այդ հոդվածներով նախատեսված դիմումները ներկայացվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով լրացվող 5.1-ին մասն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա:

4. Սույն օրենքի 3-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած այն հարաբերությունների նկատմամբ, որոնց կարգավորումների խախտումները տեղի են ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Սպառողը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ սպառողն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը կրեդիտավորողի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն ստանալու կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, որի դեպքում կրեդիտավորողը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է:».

2) լրացնել նոր 3.1-ին մաս.

«3.1. Սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր սպառողների կամ սպառողների որոշակի խմբի

մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին սպառողի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով ու ժամկետներում:»:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու դրությամբ գործող այն իրավահարաբերությունների վրա, որոնց հետ կապված սպառողների կողմից այդ հոդվածով նախատեսված դիմումները ներկայացվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով լրացվող 3.1-ին մասն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» 2017 թվականի հոկտեմբերի 25-ի ՀՕ-182-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում լրացնել նոր՝ 7.1-ին մաս.

«7.1 Սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր կրեդիտառուների կամ կրեդիտառուների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին կրեդիտառուի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով և ժամկետներում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 1.1-ին հոդվածի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) բանկը ձեռնարկել է հաճախորդի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է հաճախորդի իրավունքի խախտումը, և

2) հաճախորդի իրավունքի խախտման հետևանքով հաճախորդը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:

Սույն մասով նախատեսված հաճախորդի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:»:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը և անցումային դրույթները

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած այն հարաբերությունների նկատմամբ, որոնց կարգավորումների խախտումները տեղի են ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 81-րդ հոդվածի 3.2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3.2. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են հետևել սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ ապահովագրական ընկերության կողմից խախտման փաստը դատարանի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ առևտրային արբիտրաժի կողմից հաստատվելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է հաճախորդին վճարել երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) Ընկերությունը ձեռնարկել է հաճախորդի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է հաճախորդի իրավունքի խախտումը, և

2) հաճախորդի իրավունքի խախտման հետևանքով հաճախորդի փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է Ընկերությունը:

Սույն մասով նախատեսված հաճախորդի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունների կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով սահմանված որևէ իրավունք, սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ:»:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը և անցումային դրույթները

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած այն հարաբերությունների նկատմամբ, որոնց կարգավորումների խախտումները տեղի են ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով՝

- համանման հարաբերությունների կարգավորման համար միատեսակ մոտեցումներ ներդնելու անհրաժեշտությամբ. ոլորտային օրենքները նույնաբովանդակ հարցերի վերաբերյալ ունեն տարբեր կարգավորումներ, որոնք կիրառման առումով խնդիրներ են առաջացնում հաճախորդների ու ֆինանսական կազմակերպությունների համար.
- թղթային հաղորդակցումից էլեկտրոնային հաղորդակցմանն անցում կատարելու անհրաժեշտությամբ. էլեկտրոնային ձևով հաղորդակցման անցումը ժամանակի պահանջն է՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, ընդ որում՝ այդ փոփոխությունն արդեն կատարվել են որոշ ոլորտային օրենքներում և այդ փոփոխությունն արդեն իսկ գործող կարգավորումների տրամաբանական շարունակությունն են /օրինակ՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք/
- Միակողմանի հաղորդակցման ձևի փոփոխման սահմանափակումների իրականացմամբ. իրավունքի անսահման ազատությունը իր բացասական ազդեցությունն է ունենում ողջ համակարգի վրա՝ ստիպելով ֆինանսական կառույցներին կատարել չհիմնավորված աշխատանքներ և իրականացնել օրենքի պահանջների խախտումներ
- Արտակարգ իրավիճակով պայմանավորված հաղորդակցման կարգավորումների փոփոխմամբ:

Ընթացիկ իրավիճակը, խնդիրները և առաջարկվող կարգավորման բնույթը

- Սպառողի հետ հաղորդակցումը հանդիսանում է սպառողի և ֆինանսական կազմակերպության միջև հարաբերությունների անկյունաքարերից մեկը: Դրանք նպատակ ունեն ապահովելու մշտական հասանելիություն ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունից բխող տեղեկատվությանը: Հետևաբար, սպառողի հետ հաղորդակցման կարգը պետք է հնարավորինս ճկուն լինի ու համապատասխանի հաղորդակցման արդի մոտեցումներին: Նախագծի փաթեթով առաջարկվում է թղթային ծանուցումներից անցում կատարել էլեկտրոնային ծանուցումներին և սպառողի ու ֆինանսական կազմակերպության հաղորդակցման կարգը համապատասխանեցնել 2018 թվականին ընդունված «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված հաղորդակցման կարգին՝ ապահովելով համանման հարաբերությունների միատեսակ կարգավորումը: Մասնավորապես, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքում ևս առաջարկվում է սահմանել, որ սպառողի և կրեդիտավորողի միջև հաղորդակցումն իրականացվի էլեկտրոնային եղանակով, եթե հաճախորդը չի պահանջում, որպեսզի այն իրականացվի այլ եղանակով, օրինակ՝ փոստային կապի միջոցով:

Ուստի, Նախագծով առաջարկվում է հաղորդակցումն իրականացնել էլեկտրոնային եղանակով, ինչը սակայն չի բացառում հաճախորդի կողմից հաղորդակցման այլ եղանակի ընտրություն:

- Կարգավորման ճկունության համատեքստում որոշ դեպքերում ոլորտում առկա են իրավունքի չարաշահման դեպքեր, որոնք իրենց ազդեցությունն են ունենում ֆինանսական ոլորտ համակարգի վրա: Էլեկտրոնային հաղորդակցության սկզբունքների ներդրման պարագայում ևս օրենքով չի բացառվում նաև այլ՝ ոչ էլեկտրոնային, ավանդական եղանակներով հաղորդակցության իրականացումը, ինչը ստիպում է ֆինանսական կառույցներին հարմարեցնել իրենց գործունեությունը հաղորդակցման այդ եղանակով պայմանավորված սկզբունքներին: Եթե անձը միակողմանի պարբերաբար փոփոխում է իր կողմից նախապես ընտրված հաղորդակցումը, ապա պայմանագրի մյուս կողմը չի հասցնում ադապտացվել հաճախակի փոփոխվող իրավիճակին, քանի որ դրանք առաջացնում են մի շարք ծրագրային և այլ ընթացակարգերի փոփոխություններ: Արդյունքում նման դեպքերում ֆինանսական

կառույցները ստիպված խախտում են կարգավորումները և կրում ֆինանսական վնասներ:

Ուստի, առաջարկվում է միակողմանի ձևով հաղորդակցման եղանակի փոփոխություն թույլատրել տարին մեկ անգամ, ինչը հավասարակշռված մոտեցում է հաճախորդի և ֆինանսական կազմակերպության համար: Նշվածը չի նշանակում, որ ֆինանսական կազմակերպությունը և հաճախորդը չեն կարող համատեղ փոփոխություն իրականացնել իրենց հաղորդակցման կարգում:

- Հաջորդ փոփոխությունը օրենսդրության պահանջների խախտման համար սպառողի առջև ֆինանսական կազմակերպությունների պատասխանատվության պայմանների փոփոխումն է: Խնդիրը կայանում է նրանում, որ նույն հարցի վերաբերյալ տարբեր օրենքներ տարբեր կարգավորումներ են նախատեսում: Ինչը տարբերվում է ոլորտային մասնավորապես, «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում արդեն իսկ ներդրվել և գործում են ֆինանսական կազմակերպությանը սպառողի առջև պատասխանությունից ազատելու պայմանները՝ հիմքում դնելով ֆինանսական կազմակերպության կողմից խախտումը վերացնելու բավարար ջանքի ներդրման և սպառողի կողմից փաստացի վնաս չկրելու գաղափարը: Սակայն այդ մոտեցումը բացակայում է ավանդների ներգրավման և ապահովագրության ոլորտների կարգավորումներում:

Առաջարկվում է սահմանել, որ ֆինանսական կազմակերպության ծառայություններից օգտվող անձի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում ֆինանսական կազմակերպությունը պետք է վճարի երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝ ֆինանսական կազմակերպությունը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:

- Արտակարգ իրավիճակով պայմանավորված հաղորդակցման կարգավորումների փոփոխություններ:

Ներկա կարգավորումներով ցանկացած տեղեկատվությունը, որն ազդում է պայմանագրի վրա, անկախ բարենպաստ է այդ փոփոխությունը, թե՛ ոչ, պետք է ծանուցվի հաճախորդի ընտրած տարբերակով: Իսկ արտակարգ իրավիճակներում, երբ համատարած ձևով անհրաժեշտություն է

առաջանում ծառայության հետ կապված փոփոխություններ իրականացնել, հնարավորություն չեն ունենում ֆինանսական կառույցներն ապահովել օրենքների գործող կարգավորումները:

Ուստի առաջարկվում է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրություն դեպքում, հաղորդակցման գործող կարգը չի գործում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում բանկն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր հաճախորդների կամ որոշակի խմբի հաճախորդների մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին ավանդատուի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի ներքին ակտերով սահմանված ժամկետներում, որոնք պետք է հրապարակվեն սույն մասով նշված հայտարարության հետ:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Նշված բնագավառում իրականացվող քաղաքականությունն ուղղված է բանկային, վարկային և ապահովագրության ոլորտներում համանման իրավիճակների համար միատեսակ կարգավորումներ ապահովելուն, ինչպես նաև արտակարգ իրավիճակով պայմանավորված կարգավորումներ նախատեսելուն:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի փաթեթի ընդունման արդյունքում կապահովվի՝

- համանման հարաբերությունների միատեսակ կարգավորումը"
- հաղորդակցման սկզբունքները կհավասարակշռություն"
- արտակարգ դրությամբ պայմանավորված կարգավորումների ճկունությունը:

Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Ակտը նորմատիվ բնույթի է, քանի որ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Հաշվի քաղվածքները

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, բանկը պարտավոր է առնվազն երեսուրյա պարբերականությամբ իր կողմից կամ ավանդային պայմանագրում նշված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը ավանդատուին տրամադրել ավանդատուի՝ բանկում առկա յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք, որում հստակ և առանց որևէ շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող ձևակերպումների ներկայացվում են՝

1) յուրաքանչյուր օրվա կտրվածքով հաշվի դեբետագրումները, կրեդիտագրումները և հաշվի մնացորդը.

2) վաստակած տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.

3) ստացված տոկոսի գումարը.

4) գանձված սակագները և տուժանքները.

5) հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը:

2. Բանկը պարտավոր չէ ավանդատուին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

3. Ավանդատուի պահանջով բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք՝ բանկի հայտարարած սակագներով:

4. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը, վաստակած տարեկան տոկոսային եկամտաբերությունը և տոկոսի տարեկան դրույքաչափը կլորացվում են առնվազն մինչև մեկ հարյուրերորդականը (0.1%):

5. Սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ավանդատուին տրամադրվում են գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է հաշվի քաղվածքները փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու պայմանով: Հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի հաշվի քաղվածքները փոստային կապով ստանալու իր իրավունքից: 5. Սույն հոդվածով նախատեսված

քաղվածքները ավանդատուին տրամադրվում են գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է հաշվի քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ հաշվի քաղվածքները փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Ավանդատուն իրավունք ունի նաև սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ստանալ բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել ավանդատուին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ քարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի հաշվի քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցներով ստանալու իր իրավունքից:

6. Եթե հաշվի քաղվածքները ավանդատուին առձեռն են հանձնվում բանկի տարածքում, ապա բանկը պարտավոր է առնվազն 3 տարի պահպանել ավանդատուի կողմից չպահանջված հաշվի քաղվածքները:

7. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվի քաղվածքի օրինակելի ձևեր, ինչպես նաև նվազագույն պահանջներ:

Հոդված 9. Բանկի և ավանդատուի հաղորդակցումը

1. Բանկի և ավանդատուի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է ավանդային պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է ավանդային պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ բանկի ներքին ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ ~~փոստային~~ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2. Ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու պայմանով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի

համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կապով ստանալու իր իրավունքից:

2. Ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Ավանդատուն իրավունք ունի նաև սույն հոդվածի առաջին մասով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ստանալ բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել ավանդատունին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատունին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:

3. Եթե պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ավանդատունին առձեռն է հանձնվում բանկի տարածքում, ապա բանկը պարտավոր է առնվազն 3 տարի էլեկտրոնային կամ թղթային կրիչի վրա պահպանել ավանդատուի կողմից չպահանջված տեղեկատվությունը:

4. Ավանդի գումարի նկատմամբ վճարվող տոկոսների դրույքաչափերի վերաբերյալ ավանդատուի հարցմանը բանավոր պատասխանելու դեպքում բանկի աշխատակիցը պարտավոր է նշել տարեկան տոկոսային եկամտաբերությունը և պարզ տոկոսի տարեկան դրույքաչափը:

5. Ավանդային պայմանագրի պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ ավանդային պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, բանկը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով տեղեկացնել ավանդատունին նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

5.1. Սույն հոդվածով և 6-րդ հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում բանկն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր ավանդատուների կամ ավանդատուների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված

փոփոխությունների մասին ավանդատուի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով և ժամկետներում:

6. Ավանդատուների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով՝ Կենտրոնական բանկը իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հաղորդակցման կարգ, պայմաններ, ձևեր և նվազագույն պահանջներ:

Հոդված 12. Բանկի պատասխանատվությունը ավանդատուի առջև

1. Բանկի ծառայություններից օգտվող ավանդատուի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ավանդատուին 30 օրվա ընթացքում վճարել երեք հարյուր հազար դրամ:

1. Բանկի ծառայություններից օգտվող ավանդատուի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ավանդատուին 30 օրվա ընթացքում վճարել երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) բանկը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և

2) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:

2. Սույն հոդվածի 1-ին մասը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ավանդատուի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 17. Կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցումը

1. Կրեդիտավորողի և սպառողի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է կրեդիտավորման պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է կրեդիտավորման պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ կրեդիտավորողի ներքին ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

3. Սպառողը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն ստանալու կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, որը չի բացառում նույն տեղեկատվությունն սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տրամադրելու՝ կրեդիտավորողի պարտականությունը: Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է:

Ընդ որում, կրեդիտավորողն իրավունք չունի սպառողին պարտադրելու կամ սպառողի համար այնպիսի իրավիճակ ստեղծելու, որ սպառողը իրաժարվի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:

3. Սպառողը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է իրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում՝ սպառողն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը կրեդիտավորողի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն ստանալու կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, որի դեպքում կրեդիտավորողը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է:

3.1. Սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր սպառողների կամ սպառողների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին սպառողի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով ու ժամկետներում:

4. (մասն ուժը կորցրել է 19.06.19 ՀՕ-93-Ն)

5. Սպառողների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով՝ Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հաղորդակցման կարգ, պայմաններ, ձևեր և նվազագույն պահանջներ:

(17-րդ հոդվածը փոփ., խմբ. 19.06.19 ՀՕ-93-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Կրեդիտառուին տրամադրվող տեղեկատվությունը

1. Կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում կրեդիտավորողը պարտավոր է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետներում՝ վաղօրոք կրեդիտառուին տեղեկացնել՝

1) անվանական տոկոսադրույքների և կրեդիտառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների չափի փոփոխության մասին, եթե կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, որ դրանք առաջ են բերում կրեդիտառուի պարտավորությունների համապատասխան փոփոխություն կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում.

2) կողմերի՝ կրեդիտավորման պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների փոփոխության մասին, որոնք հետևանք են իրավական ակտերում կատարված փոփոխությունների և բխում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից.

3) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ հանգամանքների մասին: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով չեն կարող սահմանվել կրեդիտավորման պայմանագրով չնախատեսված այնպիսի դրույթներ, որոնք վատթարացնում են կրեդիտառուի վիճակը:

2. Կրեդիտավորողը պարտավոր է պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան յուրաքանչյուր հերթական վճարումից (մարումից) 20 աշխատանքային օր առաջ կրեդիտառուին անվճար տրամադրել քաղվածք: Կրեդիտավորողը պարտավոր է նաև կրեդիտառուի պահանջով տարեկան առնվազն չորս անգամ կրեդիտառուին տրամադրել վերջինիս նշած ժամանակահատվածի համար անվճար քաղվածք: Կրեդիտառուին տրամադրվող քաղվածքներում պետք է առնվազն արտացոլված լինի հետևյալ տեղեկատվությունը՝

1) կրեդիտի մնացորդը.

2) ժամանակահատվածը և դրանում ներառված օրերի քանակը, որոնց վերաբերյալ տրամադրվում է տեղեկատվությունը.

3) քաղվածքում նշված ժամանակահատվածում կրեդիտի կիրառված տոկոսադրույքը.

4) կրեդիտառուի կողմից քաղվածքի տրամադրման դրությամբ կատարված վճարումները (մարումները).

5) կրեդիտառուի կողմից հերթական վճարման (մարման) չափը և վճարման (մարման) ամսաթիվը.

6) տուժանք հաշվարկված լինելու դեպքում՝ հաշվարկված տուժանքները.

7) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված տեղեկատվությունը կրեդիտավորողին տրամադրվում է փոստային կապի միջոցով, եթե կրեդիտառուի կողմից չի ներկայացվում տեղեկությունը սույն հոդվածի 4-րդ մասում նշված եղանակներով կամ դրանցից մեկով ստանալու վերաբերյալ դիմում:

4. Կրեդիտառուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը և (կամ) 2-րդ մասով սահմանված քաղվածքը փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ կրեդիտավորողի տարածքում ստանալու պայմանով:

Տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ կրեդիտավորողի տարածքում ստանալու՝ կրեդիտառուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Կրեդիտավորողն իրավունք չունի կրեդիտառուին պարտադրելու, այդ թվում՝ կրեդիտառուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ կրեդիտառուն հրաժարվի սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը փոստային կապով ստանալու իր իրավունքից:

5. Եթե սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը կրեդիտառուին պետք է հանձնվի կրեդիտավորողի տարածքում, ապա կրեդիտավորողը պարտավոր է առնվազն երեք տարի թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա պահպանել կրեդիտառուի չպահանջած տեղեկատվությունը և (կամ) քաղվածքները:

6. Կրեդիտավորողի կողմից կրեդիտառուին հասցեագրված ցանկացած գրավոր փաստաթուղթ պետք է շարադրվի պարզ գրական հայերենով (պարզ լեզվի կանոն): Հայերենին զուգահեռ այլ լեզուների օգտագործումը չի արգելվում: Սույն մասում նշված փաստաթղթերը կարող են շարադրվել միայն կրեդիտառուի նախընտրած լեզվով, եթե կրեդիտառուն նման պահանջ է ներկայացրել, և այդ պահանջն ընդունել է կրեդիտավորողը:

7. Կրեդիտավորողի կողմից կրեդիտառուին տրամադրվող տեղեկատվությունը չպետք է լինի շփոթեցնող, խրթին կամ մոլորեցնող:

7.1 Սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր կրեդիտառուների կամ կրեդիտառուների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին կրեդիտառուի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով և ժամկետներում:

8. Ելնելով կրեդիտառուների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել կրեդիտավորողի կողմից կրեդիտառուին հասցեագրված տեղեկատվության համար պարտադիր կիրառման ենթակա ձևեր, տեքստեր կամ օրինակելի ձևեր և (կամ) այլ նվազագույն պահանջներ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 43. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

1. Բանկերը պարտավոր են ինտերնետում՝ բանկի տնային էջում, մշտապես հրապարակել՝

ա) բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը: Ընդ որում, բանկերը պարտավոր են ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում սույն օրենքի 59 հոդվածով սահմանված ժամկետում, ինչպես նաև հրապարակել դրանք առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (բանկի գլխամասային գրասենյակում, բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում):

բ) օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը: Ընդ որում, բանկերը պարտավոր են տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում:

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում:

դ) բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:

ե) բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, բանկի խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:

Սույն մասի «ա-ե» կետերում նշված տեղեկություններից բացի, Կենտրոնական բանկը կարող է պահանջել բանկից ինտերնետում՝ բանկի տնային էջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների: Սույն բացառությունը չի տարածվում «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6 հոդվածի չորրորդ մասով նախատեսված տեղեկությունների վրա:

Բանկերը պարտավոր են հրապարակել սույն մասի «ա-ե» կետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկերը պարտավոր են ինտերնետում՝ բանկի տնային էջում, և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (բանկի գլխամասային գրասենյակում, բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող բոլոր այլ ծառայությունների և հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության միջնորդավճարեր, ժամկետայնություն և էական այլ պայմաններ:

1.1. Բանկերը պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ, որոնցով պետք է սահմանվեն՝

ա) հաճախորդներին տեղեկատվության ներկայացման ձևն ու կարգը.

բ) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման և հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման ու քննության կարգն ու պայմանները:

Ընդ որում, բողոք-պահանջների ներկայացման ու քննության կարգն ու պայմանները որևէ կերպ չեն սահմանափակում դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին կամ առևտրային արբիտրաժ դիմելու սպառողի իրավունքը.

գ) բանկի և նրա կողմից առաջարկվող ծառայությունների մասին գովազդը և մարկետինգային գործունեությունը (քաղաքականությունը):

Կենտրոնական բանկը կարող է սահմանել սույն մասում նշված բանկերի գործարար վարվելակերպի կանոնների կիրարկման եղանակներին և ընթացակարգերին վերաբերող պահանջներ:

Բանկերը պարտավոր են հետևել սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդ որում, նշված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ: Սույն պարբերությունը չի տարածվում «Բանկային

ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ բանկի գործունեությունը կարգավորող այլ հարաբերությունների նկատմամբ սույն պարբերությունը կիրառելի է այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ այդ հարաբերությունները կարգավորող այլ օրենքներով:

Սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) բանկը ձեռնարկել է հաճախորդի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է հաճախորդի իրավունքի խախտումը, և

2) հաճախորդի իրավունքի խախտման հետևանքով հաճախորդը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:

Սույն մասով նախատեսված հաճախորդի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

2. Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

ա) բանկի պետական գրանցման վկայականի և բանկի կանոնադրության պատճենները.

բ) բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ բանկի բաժնետոմսերի թողարկման ազդագրի պատճենը.

գ) բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի, ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած ածանցյալ ֆինանսական գործիքների տեղաբաշխման դեպքում տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.

դ) սույն հոդվածի առաջին մասում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:

Սույն մասում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

Բանկը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնել հայտարարություն՝ սույն մասում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:

3. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերում նշված տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգ:

4. Բանկի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի անվճար ստանալու բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 2%-ին և ավելին տիրապետող յուրաքանչյուր մասնակցի (մասնակիցների) պահանջով բանկը նրան

պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա) բանկի խորհրդի, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն հոդվածի հինգերորդ մասում նշված տեղեկությունները.

բ) բանկի խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

գ) բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են բանկի կողմից սույն օրենքի 34 հոդվածի առաջին մասի «ա-գ», «թ», «ժ» և «ժա» կետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ) բանկի կողմից բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները).

զ) բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած բանկի ներքին ակտերի, բանկի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի, խորհրդի, տնօրինության նիստերի արձանագրությունների, Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, Կենտրոնական բանկի կողմից բանկի և (կամ) բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից խորհրդին և գործադիր տնօրենին (տնօրինությանը) ներկայացված հաշվետվությունների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներագդելու նրանց որոշումների վրա:

Բանկի բոլոր մասնակիցներին պետք է տրամադրվեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

Սույն հոդվածի համաձայն՝ բանկի մասնակցի ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել բանկի գործարար համբավը արատավորելու, բանկի մասնակիցների կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

5. Բանկի խորհրդի անդամների, գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ բանկի մասնակիցներին բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝

ա) նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) մասնագիտությունը և կրթությունը.

գ) վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ) տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ե) տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

զ) բանկի մասնակից հանդիսացող խորհրդի անդամին, գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քանակը.

է) տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը) փոխհարաբերությունների բնույթը տվյալ բանկի և բանկի հետ կապված անձանց հետ.

թ) բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ տվյալներ:

6. Բանկերն իրավունք չունեն իրենց գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իրենց անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ բանկի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

7. Բանկի կողմից, սույն հոդվածի համաձայն, հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

8. Կենտրոնական բանկը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ հավաքագրել բանկերի կողմից հրապարակվող ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը և իր նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով եռամսյակային կտրվածքով անփոփոխ հրապարակել հավաքագրված տեղեկատվությունը՝ ըստ բանկերի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 81. Ընկերության և հաճախորդների հարաբերությունները

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Ընկերությունը և օտարերկրյա Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղը պարտավոր են նախքան ապահովագրության պայմանագիր կնքելը՝

1) հաճախորդին հայտնել իրենց գտնվելու վայրը և հեռախոսահամարը, կազմակերպարավական ձևը, իսկ եթե ապահովագրությունն իրականացվում է մասնաճյուղի միջոցով՝ մասնաճյուղի հասցեն, հեռախոսահամարը.

2) վերահսկող մարմնի հասցեն և հեռախոսահամարը.

3) հաճախորդին հայտնել ապահովագրության այն տեսակները, որոնցով Ընկերությունը կնքում է ապահովագրության պայմանագրեր և հղում կատարել լիցենզիայի համապատասխան գործունեությամբ զբաղվելու իրավունք տվող կետին.

4) ապահովագրության պայմանագիրը ձևակերպել այնպես, որ այն համապատասխանի հաճախորդի կողմից ապահովագրման ենթակա ռիսկերի բնույթին և ծածկի դրանք.

5) հաճախորդին գրավոր ներկայացնել և բանավոր բացատրել ապահովագրության պայմանագրի բոլոր էական պայմանները.

6) հաճախորդին գրավոր ներկայացնել ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցման կարգն ու պայմանները.

7) իրականացնել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2. Ընկերության և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ:

3. Ընկերությունը պարտավոր է իր գործունեության այնպիսի կանոններ սահմանել, որ ապահովվեն ապահովագրողների համար հավասար պայմաններ և բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

1) մեկ հաճախորդի նկատմամբ Ընկերության ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին.

2) Ընկերության ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն Ընկերության հաճախորդի նկատմամբ Ընկերության ստանձնած պարտավորություններին:

3.1. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են ունենալ գործարար վարվելակերպի կանոններ: Գործարար վարվելակերպի կանոններով պետք է առնվազն կարգավորվեն՝

1) ապահովագրական ընկերության և նրա կողմից առաջարկվող ծառայությունների մասին գովազդը և մարկետինգային գործունեությունը.

2) հաճախորդների հետ կնքվող պայմանագրերին ներկայացվող պահանջները.

3) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության ցանկը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման կարգը.

4) հաճախորդների կողմից ապահովագրական ընկերություններին իրենց ապահովագրության դասերի շրջանակներում նոր ապահովագրական ծառայությունների վերաբերյալ առաջարկ ներկայացնելու ու այդ առաջարկի քննարկման ընթացակարգը.

5) հաճախորդների անհատական տվյալների պահպանման և դրանց անվտանգ օգտագործման կարգը.

6) հաճախորդների հետ վարվելակերպի կարգը.

7) հաճախորդներին ապահովագրական հատուցում տրամադրելու կարգը.

8) հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ հարցեր:

Օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ապահովագրական ընկերությունների գործարար վարվելակերպի կանոնների կամ դրանց մի մասի բովանդակության նկատմամբ կարող են սահմանվել մանրամասն պահանջներ:

Գործարար վարվելակերպի կանոնների պահանջները խախտելու դեպքում պատասխանատվությունը սահմանվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և այլ օրենքներով:

3.2. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են հետևել սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ ապահովագրական ընկերության կողմից խախտման փաստը դատարանի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է հաճախորդին վճարել երեք հարյուր հազար դրամ:

Սույն մասի երկրորդ պարբերությունը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունների կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով սահմանված որևէ իրավունք, սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ:

3.2. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են հետևել սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ ապահովագրական ընկերության կողմից խախտման փաստը դատարանի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կամ առևտրային արբիտրաժի կողմից հաստատվելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է հաճախորդին վճարել երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան,

առևտրային արքիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) Ընկերությունը ձեռնարկել է հաճախորդի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է հաճախորդի իրավունքի խախտումը, և

2) հաճախորդի իրավունքի խախտման հետևանքով հաճախորդի փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է Ընկերությունը:

Սույն մասով նախատեսված հաճախորդի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունների կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով սահմանված որևէ իրավունք, սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արքիտրաժ:

4. Ընկերություններին արգելվում է որպես հաճախորդի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու պայման նախատեսել (բանավոր կամ գրավոր ձևով)՝ տվյալ հաճախորդին այլ ապահովագրական ծառայությունների մատուցումը բացառապես իր կամ իր մատնանշած անձի կողմից:

5. Ընկերությունը պարտավոր է հաճախորդների պահանջով վերջինիս ներկայացնել հրապարակման ենթակա տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.1. Ֆիզիկական անձ հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության պայմանագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ հաճախորդի կողմից ապահովագրության պայմանագիրը լուծելու մասին ապահովագրական ընկերությանը ծանուցելու օրվան հաջորդող օրվանից, և ապահովագրական ընկերությունը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին համամասնական կարգով վճարել պայմանագրի գործողության մնացած ժամկետի համար ապահովագրավճարները: Ապահովագրության պայմանագրի հետ կապված որևէ այլ վճար հաճախորդից պահանջվել չի կարող, բացառությամբ ապահովագրության պայմանագրի հետ կապված կատարած փաստացի ծախսերի, որոնց սահմանափակումները կարող են սահմանվել Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով: Ընդ որում, հաճախորդը ծանուցման հետ պարտավոր է ապահովագրական ընկերությանը վերադարձնել վկայագրի բնօրինակը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ապահովագրական ընկերության տրամադրած այլ փաստաթղթեր:

Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

1) ապահովագրության պայմանագրի ժամկետը չի գերազանցում մեկ ամիսը, և (կամ) պայմանագրով նախատեսված ապահովագրությունը գործում է մինչև մեկ ամիս ժամկետով:

2) պարտադիր ապահովագրության դեպքում.

3) ապահովագրության պայմանագրի կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ հաճախորդը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

Մտածելու ժամանակի ընթացքում ապահովագրության պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքից չօգտվելը չի բացառում ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը:

Ֆիզիկական անձ հաճախորդը իրավունք չունի պահանջելու ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

ա. մտածելու ժամանակի ընթացքում պատահարի մասին նա չի ծանուցել ապահովագրական ընկերությանը,

բ. եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը մինչև մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է ապահովագրական ընկերությանը պայմանագիրը լուծելու մասին:

6. Սույն հոդվածով սահմանված պահանջները խախտելու, ինչպես նաև ակնհայտ կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկություններ տրամադրելու համար Ընկերությունը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով: